

С. 1930/907

10130

ԲՈՎԱՆԴ  
ԱՐԵՏ-ՎԵՍ

# ՊԱՏՅՈՒՄԿԻՆԻ ՎՐԱ

ՀԱՅՈՒԹՎԱ  
ԽՈՍՏԻՒԱ  
ԽՈՍՏԵԴԵՆԻ  
Համական Խառ  
Հ. Հ. Հ. Հ.



891.71

Բ-60

ԽՍՀՄ ԺՈՂ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ՀՐԱՄԱՐԱԿՅԱ ՄՈՍՎԱ, 1930

С. 1930/907

6105 25 NOV 2010

21 JUL 2006

С К  
С 1414  
891.21  
F - 60

ՅԵ. ԲԵՎԱԼՈՎ  
ԶԵՐԻՑԻ-ՎԵՍ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ՊԱՏՅՈՒԿԻՆԻ

ՎՐԱ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՉՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ 1930

-4 APRIL 2013

40130

ՏԱՅ ԱՅՍ 15

Փոխադրություն ուղարկենից



60683-67

Главлит А 59338.

Тип. при Управ. Делами СНК СССР и СТО. М. Дмитровка, 18.

Тираж 5000



ՏԵՇԴԵՐ ԿՂԶՈՒ ՎՐԱ

Վաղ առավոտ եւ Խորը լոռություն։ Ծովը մեղմ  
խաղում եւ ֆիրուզե քարերի հետ։ Ֆիրուզների մեջ  
թիկնած եւ Տենդեր կղզին։ Յերկնի մուգ կապույ-  
տում լողում են թափշափետուր ճայերը։ Նավակա-  
յանում կանգնած եւ սկծովյան նավատորմիղի գե-  
ղեցկուհին՝ հսկա «Պատյոմմկինը»։ Նրանից քիչ հեռու  
կանգնած եւ «267» ականակիրը։

Նավաստիները խոսում են կիսաձայն։ «Պատյոմ-  
մկինի» վրա արտակարդ անհանգստություն ետիրում։

Խոհարար Դանիլյուկը «Պատյոմկինից» հաղորդեց՝  
 — Զորախումբը խառնակվել ե...  
 Ականակիրից հարցրին՝  
 — Բանն ի՞նչումն ե:  
 Դանիլյուկը ձայնը ցածրացրեց՝  
 — Սուպը չեն ուզում, թեյ են պահանջում, զո-  
 ռում են...  
 — Ի՞նչու, — հարցրեց նավաստի Սերգեյ Գոլովիցին՝ «267»-ից:  
 Խոհարարը ձեռքերը փողաձև բերանին դրեց, դի-  
 տեց չորս կողմը, վոր վոչ վոք չլսի ե, հազիվ լսելի,  
 ասեց՝  
 — Սաղ վորդնած ե...  
 Պիդոպրի-լեռը շպրտեց՝  
 — Ա՛յ անզգամներ:  
 Գոլովիցին բռնուցըները սեղմեց: Բարկացած  
 փնթփնթաց՝  
 — Դե, այժմ կտեսնես...  
 Ծովախորշի լոռությունը խախտեց թմբուկի չոր  
 թնդյունը:  
 «Պատյոմկինի» վրա զորախումբը շարվեց:  
 Ականակիրի վրա աղմկում են:  
 — Մակարովը հոտած միս ե գնել...  
 — Իսկ Գոլիկովը, հանդիստ կաց, այդ գիտեր...  
 — Յերբ տղաները դժգոհություն են հայտնում,  
 դու լսիր, և վոչ թե հարկադրիր մարդկանց վորդ-  
 նած սուպը զոռով ուտելու, — նեղացած ասում ե Գո-  
 լովիցին: — Նրա համար միենույն ե, նա հրամա-

նատար ե, նա շան վորդի յե, ինքը չի ուտելու...  
 նա կարծում ե, թե հենց վոր զորախմբին զիջում  
 արեց՝ կարգապահությունը կթուչի:  
 — Սատանաներ, — հուզում ե Պիդոպրի-լեռը:  
 — Համառ, պառավ եշ...  
 — Նայիր, նայիր, Գոլիկովը կնեխտի \* ) վրա յե...  
 — Բժիշկը... Լիվենցովը... և են անզգամ Գի-  
 լյարեսկին...  
 — Իսկ մեխանիկները չկան...  
 — Յերկի ճաշում են:  
 — Ուղի-ի-դ-դ...  
 Կնեխտից բարձրացավ հրամանատարի ձայնը՝  
 — Դուք անբավական եք կերակրից... լավ... այդ  
 սուպը յես կուղարկեմ Սեվաստոպոլ...  
 Յերկու նավերի վրա յել մեռելային լոռություն:  
 Ականակիրի վրա ամեն մի խոսք լսվում ե: Հուղված  
 գեմքեր: Ատամները սեղմած: Գոլովիցին նայեց  
 Պիդոպրի-լեռին: Ատամները կըճտացրեց: Աչքերում  
 կրակ: Յեվ շպրտեց՝  
 — Մեզ հետ խաղ են անում, անիծուած հրեշներ...

### ԲԲԵԶԵՆՑԼ

«Պատյոմկինի» վրա հրամանատարը խիստ ասում ե՝  
 — Յես հաճախ եմ ասել, վոր նման անկարգա-  
 պահությունները ուազմական նավի վրա անթույլա-  
 — \*) Փայտի կամ պղնձի այուներ, վորոնք ծառայում են նազի վրա  
 պարաններն ամբացնելու համար:

տրելի յեն: Դրա համար ձեզպեսներին այ այնտեղ  
կախաղան են բարձրացնում, — հրամանատարը ցույց  
տվեց առագաստածայրը:

Յետին շարքերից լսվեց՝

— Ու հու ու...

Բորչանն եր դա: Նավաստիական հոգին չհամբերեց:  
Մատյուշենկոն հրեց ու շշնջաց՝

— Թո՛ղ, հիմար, բոլորին կկործանես...

Հրամանատարն առաջարկեց՝

— Ո՞վ ե համաձայնվում բո՞լո՞չն ուտել՝ դուրս  
դա: Յերկու քայլ առաջ...

Դուրս յեկան կոնդուկտորները, յերկու յերեք  
կրտսեր հրամանատարներ, Ուղղանկյուն կանգնեցին:  
Պարզ ե — թուլամորթներ են: Մնացածները տեղնե-  
րից չեն շարժվում:

Արյունը խփեց Գոլիկովի գլուխը: Կատաղած, կըտ-  
րուկ հրաման տվեց՝

— Պահակ, վերև...

Յետեի շարքերում աղմուկ: Մեկը շշնջաց՝

— Ի՞նչու զուր համառել... Միւնույն ե...

Մատյուշենկոն խոսքը կտրեց՝  
— Իմ յետեից դեպի աշտարակը, դեպի աշտա-  
րակը, կրկնում եմ: Դե, աշխույժ...

Մի վայրկյան — ևնա տասնյերկու դյույմանոց թըն-  
դանոթի մոտ ե: Այնտեղ անվտանգ ե: Կարելի յել խո-  
սել ամբոխի կողմից ու չճանաչել: Սյուրբ բառ է ու  
վե յեր առել ճարպիկ խախուը:

Զախ թեկից նրա յետենիցն ընկան: Աջից, յետեի  
շարքերից ուշացան, յետ մնացին:

Ավագ սպա Գիլյարևսկին ու հերթապահ սպա  
Լիվենցովը վազողների առաջը կտրեցին: Պահակին  
ձայն տվին՝

— Պաշարե՛լ...

Պահակն անվճռողական շարժվեց: Նրանցից շա-  
տերը նորակոչիկներ են: Բնազդորեն հասկացան թե  
ինչպիսի խայտառակ դեր են ուզում իրենց վզներին  
փաթաթել:

Գիլյարևսկին ճչաց՝

— Սպա Լի՛ վացով! Գրիր այդ անզգամների անուն-  
ազգանունները: Բոցման, բրեղենտը:

Չորախումբն աշտարակից նկատելով, վոր շրջա-  
պատվում ե՝ ցնցվեց, գունատվեց, բոլորի թիկունքով  
սառը դոկ անցավ:

Նավաստիները շատ լավ գիտեն թե ի՞նչ ենշանակում  
այդ: Ծանր, թունակից լուսությունը խախտեց մի ճիչ՝

— Յեղքայրներ, ի՞նչու դուք մեզ լքեցիք:

Վակուենչուկն եր դա: Ավագ յենթասպան, ամե-  
նազիտակիցներից մեկը: Վարչությունը վաղուց ե  
նրա վրա ատամներ կրծտացնում: Զայնի մեջ հուսա-  
հատություն, թախիծ, կսկիծ ե նկատվում:

Կշտամբանքով լի ճիշը շղթայված նավաստիներին  
ցնցեց, գիպավ սրտներին...

Մատյուշենկոն հուսահատ տոնով կանչեց՝

— Յեղքայրներ..., Հիշեցեք մեր յերդումը — մե-  
րոնց չկըակել...

Գիլյարևսկին վորոշել եր մինչև վերջը հասցնել, թէ  
վախեցնել եր ուզում—հրամայեց՝  
— Ծա-ծ-կի-ի-լ-ը...

Բրեգենտը գցեցին: Յեփս մի վայրկյան—ու նրանց  
կդնակահարեն:

— Ուղի-իդ... կրա-ա-ուլ...

Հրացանները բարձրացան:

Վակուլենչուկը գոչեց՝

— Յեղբայրներ! Թողեք: Մի կրակեք... Ուշի յե  
կեք...

Գիլյարևսկին մըթմըթաց՝

— Հա, շան ծին, դու ել սուպը չես ուզում:  
Վակուլենչուկը հակաճառեց՝

— Միթե կարելի յե նման աղբն ուտել...

Սպան տաքացավ: Աչքերից չար կայծեր են ցայ-  
առում: Գլուխը դեպի յետ վեր բարձրացրեց ու հրա-  
ման տվալ՝

— Ուղի-իդ... բըկ-ե-զեն-ալի-ին...

Յեկ մի վայրկյանից հետո՝

— Կրակիր:

Պահակը ցնցվեց: Զի շարժվում:

Գիլյարևսկին կատաղեց, հարձակվեց մոտիկ գտնու-  
վող նորակոչիկ նավաստի Գորչակի վրա: Հրացանը  
ձեռքից խլեց... Գորչակին հաջողվեց հրացանը յետ  
խլել: Սպան ձեռքը տարավ դեպի գրպանը, իբր թե  
ատրճանակ հանելու համար: Նավաստին ահից գու-  
ռատվեց: Դրանից ոգտվեց սպան ու նավաստու ձեռ-  
քից հրացանը կրկին խլեց:

Վակուլենչուկն անշարժ է: Վճռել ե թանգ ծախել  
իր կյանքը: Պահակներից մեկի հրացանը խլեց: Ար-  
յունը գլուխը տվեց:

Յեկ ուժով կանչեց՝

— Մինչև յերբ պե՞տք ա մենք ճորտ մնանք:

Ու դեպի աշտարակը: Գիլյարևսկին նրա յետելից:  
Նավաստիներն աղմկով դեպի տախտակամածի մարտ-  
կոցային մասն անցան:

— Զարկիր գարշելիներին, չխնայենք...

— Նետել ձկներին...

— Հրացանները խլել...

— Դեպի վառողի նկուղներն... այնտեղ են փամ-  
փուշաները...

ԶԵՆՔ ՎԵՐՑՆԵԼ.

Յերբ Մատյուշենկոն ու նավաստիները հարձակ-  
եցին մարտկոցի վրա, ականակրից Գոլովիցկին  
նկատեց նրանց:

Պիդոպրի-լեռը ուշի գալով վրա բերագ՝

— Այ թե համեն հրացաններին—նրանք գըտ-  
նվում են բուրդի վրա... Տղերքը թափվեցին նկուղ-  
ները, այնտեղ փամփուշով լի արկդներ են..., նրանց  
հերը կանիծեն...


— Նայիր, նայիր,—գոչեց Գոլովիցկին,—նայիր,  
Մատյուշենկոն դուրս պրծավ... հրացանը ձեռքին...

Յեկ լսվեց՝

— Զարկիր զըանց, այդ շներին...

— Հրացանները վերցրեք...

— Կորչի միապետությունը...  
 — Կորչեն բռնակալները...  
 — Ուսադիրները պոկել...  
 — Տախտակամածից նետել դրանց, հրեշներին...  
 Մատյուշենկոն վաղեց ու բռնեց աշտարակի  
 դուռը, փակաղակը շարժեց—լցած չե՛ փամփուշտ չկա.  
 — Ընկերներ... Փամփուշտ... Դե հա... Արագ...  
 — Հրացան առեք!... Կեցցե ազատությունը...—  
 գոչում ե Ծիծովվը:  
 — Պռները ջարդել... Արագ... Այնտեղ փամփուշտ-  
 ներ կան...  
 Թնդյուն: Յերկաթի շաչյուն: Իրարանցում: Տախ-  
 տակամածի վերին մասում նեռապոկոյեվը բղավում ե՝  
 — Դատի տալ, բոլորին դատի տալ...  
 Ականակիրից Գոլովլիցկին տեսնում ե, թե ինչ-  
 պես «Պատյոմկինի» հրամանատարը և սպաները արագ  
 շարժվեցին դեպի աշտարակը:  
 — Զես խարի,—ասեց Պիդոպրի-լեռը:—Այժմ ձեզ  
 ցույց կտան:  
 Թոլիկովը ճշում ե՝  
 — Հրացանը նետիր...  
 Մատյուշենկոն ծուռ ժպաաց՝  
 — Յերբեք, քանի յես վողջ եմ...  
 — Նետիր հրացանը, յես հրամայնում եմ,—խըռ-  
 պոտ ձայնով կանչում ե «Պատյոմկինի» հրամանատարը:  
 Մատյուշենկոն զայրույթից գոռաց՝  
 — Կորիր: Զըահակիրն այժմ ձերը չի: Նա պատկա-  
 նում ե մեզ, ամբողջ ժողովրդին:



Արագությամբ սվինը հանեց: Ուժով նետեց հրամանատարի վրա: Զդիպավ: Սվինը թռավ ու ցցվեց տախտակամածում: Նավաստին կատաղեց: Փորձեց հրացանի կոթով: Գոլիկովը շրջվեց: Հրացանը յերկու կես յեղավ: Մատյուշենկոն նետվեց մարտկոցը ու նոր հրացան վերցրեց: Դուանը կանգնեց: Ուղեղում պարզ պատկերացավ դուռը հսկելու անհրաժեշտությունը: Հանկարծ հրամանատարական սանդուխքի վրա յերեաց մեկը ու զգեստով: Զեռքին բռնած խաչ՝

— Խաղաղություն քեզ, վորդյակ...

Մատյուշենկոն չհամբերեց՝

— Կորիր ջնանդամը, անձունի հրեշ:

Կոթով շոլկացրեց:

Յերկարաբաշ սեազգեստը խաչը նետեց:

Ինչ վոր ձեռք փամփուշաներ ե մեկնում...

Մատյուշենկոն մի աբոյմա խրեց փամփուշտատուիը: Բնկավ նեռապոկյեկի յետեից: Վազելիս մի քանի անգամ կրակեց: Անհաջող: Ելի փամփուշտատուիը լցրեց...

Մեկ ել...

Հրամանատարական լյուկից Գոլիկովը ընկավ:

Դա սպաներից առաջինն ե: Բայց առաջին զոհը չի: Առաջինը վիրավոր մահամերձ ընկավ նավաստի Վոկուենչուկը՝ ավագ սպա Գիլյարևկու ձեռքից:

Պիտուրի-լեռը դոչեց՝

— Նայիր, Գիլյարևկին Վակուենչուկին սպանեց... վազիր տախտակամածի վերի ծայրը:

Մատյուշենկոն... նրան նշան ե բռնել՝

— Ախ, սատանան տանի, տաքացել եմ... վրիպեցի...

Ավագ սպան հրացանը վերցրեց — վրիպեց: Պահակը դրոշակի մոտ ե: Զահել, անմորուս, համարյա թե պատանի...

Գիլյարևկին բղավում ե՝

— Գնդակահարել այդ շանվորդուն...

Պահակը դողաց: Հրացանը շպրտեց: Փախավ: Գիլյարևկին պահակի նետած հրացանը վերցրեց, բայց չհասցրեց կրակելու, կրակեց Մատյուշենկոն: Գնդակը ուղիղ թիկունքին: Գիլյարևկին որորվեց, ընկավ տախտակամածին: Սպայական հին սովորությամբ արնաշաղախ խոխուացնում ե՝

— Ուզում ես փախչել մփը... Յես քեզ, անըզգամիդ, գիտեմ... Յես քեզ այնտեղ ել կդտնեմ...

Մատյուշենկոն կատաղեց: Աչքերն արնով լցվեցին: Զայրույթով ատամները կրճտացրեց՝

— Զես հասցնի, ախմախ: Յես քեզ կուղարկեմ ջրի հատակը — Մակարովի մոտ:

Ողում հնչեց՝

— Զուրը նետել դրան...

— Զկներին...

Զանցավ մի վայրկյան — Գիլյարևկին տախտակամածից թռավ դեպի ջուրը:

ՀԱՄԱԳԱՐԿԸ ՍՊԱՐՏԵԿԻՑ\*)

«Պատյոմկին»-ի սպայությունն այս կարծիքին եր — մի խումբ նավաստիներ խառնակչություն են

\*) Սպարտեկ — տախտակամածի մի մասը:

գցել։ Մյուսները չեն համարձակվի խմանակցելու։ Իրանք իշխանությունը կպաշտպանեն։ Ի՞նչ գնով—դա միևնույն եւ։ Պարզմատրվելու հնարավորությունները հուզում են։

Այդպես եր մտածում և ականակիրի սպայությունը։ Հերթապահ սպա Լիվենցովի ձեռքին ատրրանակը փամփուշտով լի կրակի պատրաստ եւ։ Նավաստիների խմբին մոտեցավ Սմիրնովը։ Ատրճանակը պարզեց՝

— Յեթե մեկն ու մեկը մատով անգամ շարժվի—տեղն ու տեղը կսատկացնեմ...

Լիվենցովն ատրճանակով շարժու մներ կատարելով գոչում եւ։

Կանգնե՛լ ուղիղ... Կգնդակահարեմ վորպես շների... Հանկարծ համազարկ...

Նավաստիներից մոտ քսան մարդ իրենց նետեցին սպարդե կը՝ դեպի տախտակամածի մի մասը։ Անասնական սարսափը սպաների գլխից ամեն ինչ դուրս վանեց։ Խուճապը բռնկվեց։ Սպաները, կոնդուկտորները, յենթասպաները և նավաստիներից վոմանք իրարհրելով նետվեցին ներքին տախտակամածը։

Փրկարար ողերը իրար ձեռքից խլխլում են... Նավից ձգում են իրենց։

Մի քանի համարձակներ հրացաններով նետվեցին ապստամբների բռնած մասից վարը, Փամփուշտներ յերեացին։ Արկղները ջարդում են սվիններով, դանակներով—ով ինչով կարող եւ։ Գոլովիցին նկատեց։

— Տես, ֆուրսակի ձեռքերն արնաշաղախ են... քերթվել են... ուղղակի ձեռքերով ե բաց անում...

«Պատյոմկինի» վրա վորոտաց՝

— Կորչի միապետությունը... կեցցե՛ ազատությունը...

Յեվ իսկույն, զայրացկոտ՝

— Զարկիր դրանց, անզգամներին... Զարկիր բոլորին...։

Ամբողջը խառնվեց՝ նավաստիների համազարկը, սպաների տնքոցը։ Կրակում են բոլոր կողմերի վրա։ Ամենից շատ գեպի ջուրը, Սպաները լողալով փորձում են փրկել։ Նրանք փորձում են լողալով «267»-ում ապաստան գտնել։

Ականակիրից Պիդոպրի-լեռը բացականչեց՝

— Պետք չե դրանցից վրեժ լուծել անհատապես, հատ-հատ...։

Գոլովիցին կըկնեց՝

— Բարձրացնել դրանց բոլորին տախտակամածը և դատել ամբողջ զորախմբի ներկայությամբ։

— Նայիր, տե՛ս ականի բաժնից մեկին քարշ են տալիս։

— Նա յե, ականի սպան... Տոննը...

— Տղաները կատաղեցին, ու գոռացին՝

— Զուրը գցեք...

— Տախտակամածից նետել...

— Զկներին...։

Տոննը նշան արագ։ Տոննը ուղում ե ինչ վոր բան ասել։

Խելագարված ամբոխն իսկույն հանգստացավ:  
 Նավաստիները նրան համարում են լավ սպա:  
 Խելոք, յեռանդուն: Զորախումբը նրան հարդում ե:  
 — Մատյուշենկո... Յես ուզում եմ քեզ հետ  
 խոսել...

Նավաստին մոտեցավ: Հրացանը ձեռքին ե—չի  
 վստահում: Նավաստին պահանջեց՝  
 — Ուսադիրներդ պոկիր...

Սպան արհամարանքով աչքերը կկոցեց: Մատյուշենկոյին նա համարում ե ղեկավար—պետք ե անհետացնել...

— Հիմար, դու չես նրանց տվել, դու չպետք ե նրանց պոկես...

Իրար յետելից յերկու անգամ կրակեց: Առաջին գնդակը վիրավորեց նավաստիներից մեկին: Յերկորդը Մատյուշենկոյին յերեսահան չանգուեց:

Վաթունյերորդ մեքենավարը ատրճանակը խլեց, Հրացանի փակաղակը շխկաց. կրակոց... Մի վայրկյան, և սպա Տռննը տախտակամածից գլուխեց ջուրը:

Շիթերի ցայտում: Ցողեր: Զուրը վարդապունեց:

ԳՈԼԻԿՈՎԻ ՎԵՐՁԻՆ ՎԱՅՐԿՅԱՆՆԵՐԸ

— Ուր ե հրամանատար Գոլիկովը: Վար ջնադամումն ե թագնվել:

— Այստեղ ե...

— Նրան դուրս բեր...

Խուժեցին հրամանատարության առանձնարանը...

Դողում ե: Կորցրել ե իրեն: Ուզեց տախտակամածի կողքից թռչել: Զհասցրեց: Ուշացավ: Բունեցին:  
 — Ուր ես խցկում... Այստեղ, դեպի վեր...  
 — Գնա սանդուխը:  
 — Միենույն ե ուր մեռնել՝ այստեղ թե այնտեղ:  
 Կաղկանձելով՝  
 — Այս, յես ծեր հիմարս, յես ինչ արեցի...— ու  
 մեկի վզովը փաթաթված աղերսում ե՝  
 — Զորախմբի առաջ յես մեծ հանցավոր եմ...  
 Ներ...

60683.67  
 Նավաստիներն ատելությամբ նայում են նրան, ում ձեռքին վոր գտնվում եր ութհարյուր մարդու բախտը: Այժմ նա խեղանում ե, ներում ե աղերսում...

Մեկը շպրտեց՝  
 — Այ... զզվելի...  
 — Այսունուշտին զրահակիրի ծայրը... դա, այդ սրիկան մեզ նավի ծայրով եր ահարեկում...  
 — Յերկար չսպասել...  
 — Գնդակը ճակատին...

Տարան տախտակամածի յետել մասը: Համազարկ... Մի պահ ճոճկեց ողում... ծայրից գլորվեց: Կամաց-կամաց ընկղմվեց: Անհայտացավ...

Զորախումբը գազագել ե՝  
 — Բոլորին տախտակամածի ծայրից շպրտել...  
 — Շպրտել ջուրը դրանց բոլորին...  
 — Զարկիր այդ հրեշներին...  
 Ուրիշները խառնվեցին՝



— Բավական ե արյուն... այժմ այդ գարշելիները մեզ համար այնքան ել սարսափելի չեն...

— Տուր այստեղ—տախտակամածից գլորենք...

Ահա, ում վոր բերում են, Հաստ, պարարտ: Ոբուխովսկի գործարանի գնդապետն եւ Յեկել և թնդանոթները փորձելու համար:

— Վորտեղ դուք դրան գտաք:

— Պահարանում...

— Հաստափոր հրեշին ուժով դուրս քաշեցինք...

— Բանտարկել...

Հայտնվեց Ալեքսեյեվը: Գունատ, շրթունքները ինչպես կտավ, ատամները չխկչխկում են, ծնկները դողում՝

— Յեղայրներ, ինձ մի սպանեք,—յես ել ձեզ պես նավաստի յեմ... Սովորել եմ: Սպայի քննություն եմ բռնել... Դե, ահա և սպա դարձրին...

*Մատյուշենկոն ասեց՝*

— Վոչ վոք չի պատրաստվում քեզ սպանելու...

*Մյուսներն աղաղակեցին՝*

— Տա՛ր մեզ Ողեսսա...


— Հրամանատարի տեղը կլինես...

*Մտածեց՝*

«Այսպես թե այնպես, մահ ե»...

Յեվ գունատված շուրթերի տակից շշնջաց՝

— Լա՛վ:



«267» ԱԿԱՆԱԿԻՐԾ ՄԻԱՆՈՒՄ Ե «ՊԱՏՅՈՄԿԻՆԻՆ»

Ականակիրի վրա հրամանատարը հուզված ե: Բարոն Կլոդար ջղայնանում ե՝  
— Ահա թե ուր հասավ նման վարչության բռնած գործը...

Դզզզ... դզզզ... յերգեց գնդակը:  
Յերկրորդը, յերրորդը... կպչում ե կորպուսին:  
Նայեց Գոլովլիցկուն:  
— Ահա թե ինչ, յեղբայրներ, — պետք ե ճեռու դնալ, թե չե մեկն ու մեկն կդիպչի...

Պիգոպի-լեռն ասեց՝  
— Տես վոր վատ չլինի...  
— Նայիր, նայիր, լողում ե...  
— Ո՞վ: Սպա՞:  
— Դա Մակարովն ե:  
Դուրս քաշեցին տախտակամածը: Թուլացել ե,  
դողում ե:

— Յեղբայրներ, բաճկոնս հանեցեք...  
Նավաստիները շակութեցին՝ չգիտեն, ինչպես վար-  
վել: Նավաստիներից մեկը ֆլանելե վերնաշապիկ  
բերավ: Սպան գրպանից թղթագրամներ ե հանում:  
Զորացնում ե:

Հեռագրական ապարատը լուսության մեջ խուլ խրդ-  
դաց: Սլաքը ցույց տվեց՝

«Պատրաստվել»:  
Խարիսխը քաշում են: Խարիսխը քաշող ճախա-  
րակը խանդարվել ե:

Կամբջից՝

— Պարանը քաշել...

Կլոդար վողը բերնին ինչ վոր հրաման տվեց, —  
մեքենան աշխատում ե: Գոլովլիցկուն՝ ինչ վոր  
բանի համար ուղարկեցին ներքի: Պիգոպի-լեռն  
անվատահությունն ուժեղանում ե: Քթի տակ շնչաց՝

— Ողեսսայում զգվելին կմատնի...

Մերկ, քաշալ գլխում արագ հասունանում ե  
ծրագիրը՝

— Ի՞նչ կա այդտեղ յերկուր մտածելու, պարզ ե  
վոր քիթը արջում ե դեպի ափը: Այդպես ապահով  
կլինի:

Հանկարծ թնդանոթի կրակոց: Ականակիրի կորպու-  
սը տատանվեց: Զորախումբ շտապ բարձրացավ վերև:  
Իրենց կորցրել են, շփոթվել:

— Այդ ինչ ե... — փնթփնթաց Պիգոպի-լեռը:

Գոռ խոսում են կրակոցները: Թնդանոթի ոռւմքն  
լնկավ ականակիրի քթի մոտ: Զրի արծաթափայլ  
խուրձեր բարձրացրեց:

Պիգոպի-լեռը աղաղակեց՝

— Նրանք մեզ չեն վստահում:

«Պատրամկինի» վրա հուզված են՝

— Այդ սատանաներն ականի ապարատ ունեն...

— Ականը թողնեն, խաթա յե... կպայթեցնեն,  
անիծվածները...

— Կանգնեցրու քիթը դեպի ափը...

— Մեքենան կանգնեցրու...

— Միենույն ե, կհարվածենք...

— Կջարդենք...  
— Քիթն ուղղեցեք գեղի ափը... Մեքենան դե-  
կավարեցեք...

Հեռագրական ապարատը զնգզնգաց: Մեքենան ծանր  
փնչում է: Կորպուսը ցնցվում է, կլողակը նշանավագ՝

— Հաղորդիր՝

«Մեզ ական չունենք»:

Դրոշակները փողփողացին:

Ականակիրը պտույտ յեկավ, քիթն ուղղեց գեղի  
ափը: «Պատյոմկինից» աշալուրջ դիտում են: Ականի  
ապարատն այժմ նրա համար սարսափելի չե:

#### ԴԵՊԻ ՈԴԵՍՍՈ.


Մոտեցան: Շաբքի կանգնեցին: «Պատյոմկինից»  
մեկը բռնեց կլողակի դոշից, թափահարեց, նազանը  
հանեց... Զար աչքեր... Բերանը ծռվել է: Մի վայր-  
կյան... և կդնդակահարեն...

Զորախումբը մեջ ընկավ: Բողոքեց: Պիդոպրի-  
լեռը բացականչեց՝

— Թո՞ղ: Ի՞նչու սպանել... Նա լավ մարդ է: Ակա-  
նակիրի զորախումբը նրան սիրում է: Պետք ե դեռ  
պարզել...

— Դրանից լավը չի գտնվի... Զորախմբի համար  
ցավում է, հոգում... — հուզված ու կարեկցությարբ  
ասեց մեկ ուրիշը:

Քիչ աղմուկից հետո ականակիրցիներին հաջող-  
վեց կլողակին լուել: Բայց լավ թափ տվին:



Գունատվել ե, սակայն հանգիստ ե: Իրեն պահում ե արժանավայել: Պիդոպրի-լեռն առաջարկեց ականակիրը թողնել: Տարան «Պատյոմկին»: Ուսադիրները վերցրին: Տեղափորեցին նավասենյակում:


Զորախումբը հավաքվեց վերին տախտակամածի կենտրոնում՝ շկանցի վրա: Վորոշվում ե մեկնել Ողեսսա: Ականակիրը պետք ե ուղեկցի: Անհրաժեշտ ե ածուխ ու կենսամթերք ճարել: Սպաները բանտարկված են: Բանտարկված ե և բարոն Կոդար: Սպա Ալեքսեյեվը հրամանատարի տեղն ե, բայց նա գոհ չե: Նման գործի համար բարձր հրամանատարությունը Ալեքսեյեվին չի շոյի:

Մեկնում են:

«Պատյոմկինը» հպարտությամբ կտրում է ծովի կապույտը:

Մուրզակը հեռադիտակը դրեց աչքերին: Բոցմանը\*) կյանքի ընթացքում առաջին անգամն ե ինքնուրույն զեկավարումնավը: Զորախումբն ընտրել ե նրան ավագ սպա: Սարսափելի յե: Բայց Ալեքսեյեվը մոտ ե... Հարկ յեղած դեպքում կարելի յե հարցնել:

«267» ականակիրը գնում ե ուղիղ «Պատյոմկինի» յետերց: Մեքենան համաչափ փնչացնում ե: Վառ հույզերով շտապում են Ողեսսա: Արագ, արագ... Շուտ համել այնտեղ, հեղափոխական ժողովրդին պաշտպանելու համար: Պիդոպրի-լեռը և Գոլովլիցկին կամբջիկի վրա յեն: Սրահայաց դիտում են առաջ:



\*) Բոցման—նավատորմղում ասում են յենթասպային:

Դեկում անիվը բռնած է մի յերիտասարդ նորակո-  
չիկ-նավաստի:

— Յեվ այս բոլորի պատճառը հոտած, վորդնած  
միսն ե— վնթինթում ե զեկում կանգնածը:

— Բանը դրանում չե,—առարկեց Պիդոպրի-լե-  
ռը, —մարդկանց համբերանքը հատավ: Շատ են համ-  
բերել: Ամեն կողմից ժողովուրդը բարձրանում ե...  
խոկ դու—հիմար դուրս ես տալիս... ե՞խ դու...  
պետք ե ըմբռնել...

Մեքենան վնչում ե: Հեռվում, կապույտ ջրերի  
վրա խաղում են ստվերները:

ՆԱՎԱՍՏԻՆԵՐԸ... ՆԱՎԱՍՏԻՆԵՐԸ...

Հարավի գեղեցիկ տաք գիշեր ե: Ողը վողող-  
ված ե ծովի բուրմունքով: Նավահանգստում խաղաղու-  
թյուն ե: Ել չի հնչում «մայնա», «վիրա»\*): Ափից  
բուրում են ակացիները:

Ծովափնյա զբոսավայրում փայլվլում են ելեք-  
տրական լույսի շողերը:

Ժամի տասը զարկեց:

Հպարտությամբ անցավ: Առանց հարցնելու: Յերեք  
ծխափողանի... Պողպատից... Ահարկու... Վիթխարի...

Յետեից, վորակես խեչափար, սահում ե «267»  
ականակիրը:

Պարանը բարձրածայն խրթխրթաց: Խարիսխ գցե-  
ցին:

\* ) — Հբաման՝ մեքենայով բարձրացնելու և իջեցնելու.



Դա 1905 թվի հուլիսի 14-ին եր, ժամը 22-ին:  
Հիշեց:

Սև Ծովյան հսկան կանգնած ե Ողեսսայի ծովա-  
խորշում:

Բանվորական թաղերում բուռն վոգեռություն ե:  
Մոլդավանկայում, Պերեսիպում, Ռոմանովկայում  
տիրեց աննման խնդություն:

Մթագնած դեմքերը պայծառացան:

Առաջ կամացուկ, հետո բարձրագոչ՝

— Նավաստիները, նավաստիները...

— Ի՞նչպես չուրախանալ: Յեկել ե նա, վորն  
առաջին անգամ բարձրացրեց ապստամբության ալ  
դրոշակը:

Դրոշակի յետեր՝ վոսկետառ՝

«Իշխան Պատյոմկին Տավրիչեսկիյ»:

«ՊԱՏՅՈՄԿԻՆԵԽ» ՔԱՐԱԾՈՒԽ, ԶՈՒՐ ՑԵՎ, ՊՐՈՎԻԶԻՈՆ.

Վաղ առավոտ ե: Նավահանգստի նոր մուտքի ծայ-  
րին մի վրան: Յերեսում ե, վոր նավաստիների ճաք-  
ճրքած ձեռքերով, առագաստից շոտապ պատրաստած  
բան ե: Նրա մեջ, պատգարակի վրա, դրոշակազարդ  
մի ննջեցյալ: Յերիտասարդ, աշխույժ, այրված յե-  
րես: Նրա հազին ամեն ինչ նոր ե: Ընկերներն աշ-  
խատել են զարդարել, վոչինչ չեն խնայել:

Զնափայլ համազգեստի վրա կպցրած ե մի դրու-  
թյուն:

Գրված ե՝

«Ողեսսա քաղաքի ընկերներ!»

Զեր առաջն է Գրիգորիյ Վակուլենչուկի դիմակը,  
վորին գաղանաբար սպանել ե ավագ սպա Գիլ-  
յարեսկին նրա՝ համար, վոր նա հրաժարվել ե  
վորդնած բորշչը ուտ նրա կառավարությունից՝  
ուռս ժողովրդին հայնոյելու և ձնշելու համար:

Կեցցե՛ աղատությունը! Կեցցե՛ն յեղբայրու-  
թյունը և հավասարությունը!

Կորչի թագավորը! Մեկն ամենքի և ամենքը  
մեկի համար!

«Իշխ. Պատյոմկին Տավրիչեսկի»  
զրահանավի՝ զորախումբը»:

Ահազին քարե սանդուխքի վրա, Լեվաշովի, Վո-  
յենսիյ և մյուս յելարանների վրա հավաքված ե ամ-  
բոխ: Ժողովուրդը սելավի պես հոսում ե: Ամեն մեկն  
շոտապում ե նավահանգիստ: Այստե՛ղ: Նավահանգստի  
ծայրը: Վրանի մոտ: Նրա մոտ՝ ով ընկել ե անվեհե-  
րությամբ: Նրա մոտ՝ ով չի սարսափել իշխանության  
յերեսին զարկել ճշմարտության ու բողոքի խոսքը:

Կապույտը վոսկեզոծված ե: Այստեղ, բլրի վրա,  
արևազոծ լույսում—քաղաքն ե:

Այստեղ, վարում, նավահանգիստը։ Մեղմ ծփում  
ե ծովախորշի ալիքը։ Անհամար գլուխների մի ծով։  
Այստեղ են նավաստիներ, բանվորներ, ուսանողներ,  
ուսանողուհիներ, ծերեր, ուելիստներ, բոսյակներ,  
կորաքիթ վրացիներ, տղաներ, պառավներ։

Վրանից վոչ հեռու, մոայլ, արեից դեմքը բռոնդա-  
պատված մեկը կանգնած ե տակառին։ Հաղթ ու  
մկանոտ։ Դեպի զայրացած ամբոխը ծանր, կրակոտ  
խոսքեր ե շպրտում։

— Բնկերներ! Կատարվեց այն, ինչ վոր պետք եր  
սպասել։

Ամբոխը մռնչում ե...

Մյուս ծայրում մի աղջիկ, Խոնավ, աղի ողի մեջ  
զրբնդաց աղջկա ձայնը՝

— Բնկերներ! Նավատորմիղը դարձել ե ճնշված ժո-  
ղովրդի պաշտպանը։ Այստեղ, վերում, թագավորի մանկ-  
լավիկների շրջանում լիովին հուսահատություն ե։ Պետք  
ե հենց հիմի, անմիջապես դիմել վճռականգործի...

Խոսքը չվերջացրեց։ Մազոտ ու ահազին մի  
բռունցք կրծքին դիպավ։ Նավահանգստի վոստիկանը  
կատաղել եր, գոռում։

— Զարկեք ջնուդ...

Աղջիկը սփրթնեց։ Բրառնիքն ուղիղ ճակատին։

Աղջիկը տեղն ու տեղը մնաց։ Ջեռքերը շարժեց։  
Յերեսի վրա ընկալ հասա կոճղի կողքը։ Մառսուն։  
Մատերով հողը շանգուարում ե։ Տակին մուգ ար-  
յան լիճ ե գոյացել։

Ամբոխը յետ շարժվեց։

Իսկ այստեղ, ուր ամենից խիտ եյին մարդիկ, այս-  
տեղ, ուր մի խումբ նավաստիների շուրջը բանվոր-  
ները խտացել են, բարձր, բարձր գղրդում են ձայներ՝  
— «Պատյումկինին» ջուր, քարածուխ և պրո-  
վիզիա...

«Պատյոմկին» զբահանալի ապստամբությունը  
1905 թվի հեղափոխության փառավոր եջերից  
մեկն եւ Մենշևկների թուլամորթության պատ-  
ճառով «Պատյոմկինը» չկարողացավ Ողեսսան  
վերցնել և ստիպված յեղավ փախչել Ռումինիա,  
ուր և հանձնվեց Ռումինական կառավարությունը  
Կոնստանցանավահանգստում զինաթափ և անում  
մատրոսներին, հայտնում և ոռւսական կառավա-  
րությանը, վորը և յետ և ստանում «Պատյոմկի-  
նը»:—Մատրոսները ցրիվ են գալիս և միաժա-  
մանակից հետո նրանց մի մասը, հուսալով վոր  
1905 թ. մանիքեստի հետեանքով ներումն կստա-  
նան, վերադառնում են Ռուսաստան, սակայն  
այստեղ նրանք ձերբակալվում են և բանտի, աբ-  
սորի, նույնիսկ կախաղանի դատապարտվում...

---

ՀՀ Ազգային գրադարան



NL0315807

10531

20 40т.

Санкт-Петербург  
Институт  
Востоковедения  
Академии Наук  
СССР



Е. Бывалов (Зюйд-Вест)

**НА «ПОТЕМКИНЕ»**

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С.С.С.Р.  
Москва, центр, Никольская, 10